





Սեբաստացի քառասուն մանկանց հիշատակը Վիրահայոց թեմում նշվեց Սուրբ և Անմահ Պատարագով

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին Մեծ Պահքի չորրորդ շաբաթ օրը ոգեկոչում է Սեբաստիայում նահատակված սուրբ քառասուն մանուկների հիշատակը:

2018 թվականի մարտի 10-ին, Սեբաստացի սուրբ քառասուն մանկանց հիշատակության օրը, Թբիլիսիի Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցում Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Վիրապ քահանա Ղազարյանը: Եկեղեցում վառվեցին ծաղիկներով զարդարված մոմերը՝ ի հիշատակ նահատակված քառասուն մանկանց:

Հընթացս Սուրբ Պատարագի, արժանապատիվ Տեր Մանուկ քահանա Զեյնալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց օրվա խորհրդի մասին, ներկայացրեց 4-րդ դարում Լուսապսակ այս քաջ սուրբ քառասուն մանուկների նահատակության պատմությունը, որոնք բոլորն էլ կայտառ երիտասարդներ էին: Նրանք Փոքր Հայքի տարբեր քաղաքներից էին և զինվորական ծառայության մեջ էին Սեբաստիա քաղաքի կայսերական գնդում: Ավելի խոր ու սերտ միությամբ, իբրև մեկ հոգի, քրիստոնյա հավատքի մեջ ամրացած ու զորացած, նրանք կարողացան արիությամբ, անվախ կեցվածքով դիմավորել քրիստոնյա հավատքի դեմ ուղղված սպառնալիքը, նահատակվեցին, բայց չդավաճանեցին իրենց հավատքին:

40 մանկանց պատմության օրինակով արժանապատիվ քահանան ներկաներին հորդորեց՝ կյանքի բոլոր դժվարությունների մեջ անգամ հավատարիմ մնալ Քրիստոսի հավատին, ապրել սիրով, լինել բարի ու զոհաբերության պատրաստ, հաղթահարել դյուրահաճ

1 / 3







Սեբաստացի քառասուն մանկանց հիշատակը Վիրահայոց թեմում նշվեց Սուրբ և Անմահ Պատարագով

գայթակղությունները, ապրել երկնային պսակին արժանանալու նվիրումով:

Սեբաստիայի 40 վկաների նշխարներն ամփոփվում են Սեբաստիայում, որտեղ և հետագայում կառուցվեց «Քառասուն մանկունք» 40 գմբեթանի տաճարը, որ կանգուն է եղել մինչեւ Լենկթեմուրի արշավանքը:

Պատարագի ընթացքում եկեղեցում 40 վառվող մոմերով զարդարված սեղանը խորհրդանշորեն վկաների հավատարմությունն էր քրիստոնյա հավատին, և նրանց նահատակությունը, որ երևում էր լուսե պսակներով: Իսկ տանջանքներին չդիմացող նահատակի մոմը, որ մնացել էր առանց ծաղկի, խորհրդանշում էր նրա զրկվելը երկրային և երկնային կյանքից:

Հավարտ պատարագի՝ հոգևոր հայրերի կողմից կատարվեց բուսական յուղի ավանդական օրհնություն, որը հավատացյալները տարան իրենց տները:

2 / 3



Սեբաստացի քառասուն մանկանց հիշատակը Վիրահայոց թեմում նշվեց Սուրբ և Անմահ Պատարագով

3 / 3